գրաւում էին նայողի ուշադրութիւնն ու համակրանքը. այդ յատկութիւնների շնորհիւ նա շուտ մուտք գտաւ Կայսրուհու և թագաժառանգի մեծազգեցիկ պրանիկների տներում:

Արքեպիսկոպոսին յատուկ թափանցիկ ու նուրբ միտքը, բնածին խոհականութիւնը, ընդարձակ գիտելիքներն և այն դարու քաղաքագէտներին զբաղեցնող արևելեան երկիրների կացութեան ծանօթութիւնը հնար տուին նրան, չնայելով իւր երիտասարդական հասակին (ծնուած էր 1743 թ.) և ռուսերէն չգիտենալուն, վաստակել այնպիսի անձանց համակրանքն ու վստահութիւնը, ինչպէս էին վեհափայլ Գ. Ա. Պոտեմկին իշխանը, Ա. Վ. Սուվորովը, Ն. Ի. Պանինն և Վ. Զուբովը: Իշխան Յովսէփ արքեպիսկոպոսի դատողութիւններն արևելեան քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներում այն աստիճան կարևոր էին Գ. Պոտեմկին իշխանի, Սուվորով, Ն. Ի. Պանին և Վ. Զուբով կոմսերի կարծիքով, որ դրանք բացէ ի բաց անհրաժեշտ դատն նրա ներկայութիւնն երկրորդ տաճկական և պարսից պատերազմների ասպարիզում, և նա ուղեկից եղաւ ռուսաց զօրքին այդ արշաւանքների ժամանակ:

Սրբազանի հոյակապ ձիրքերը, երկու արքունեաց և բարձրագոյն կառավարչական շրջաններին մերձաւոր լինելը, ինչպէս և Օրթոդոքս եկեղեցու գլխաւոր հովիւների՝ այնէ Մոսկուայի Պատոն միտրոպոլտի և Ս. Պետերբուրգի Գաբրիէլ միտրոպոլտի հետ բարեկամական յարաբերութիւններ ունենալը շատ նպաստեցին նրա Հայաստանեայց եկեղեցու և հայ ազգի զանազան կարեաց հեղինակաւոր և ազդեցիկ ներկայացուցիչ հանդիսանալուն: Փառասէր էր նա, սակայն ձգտում էր յագեցնել այդ զգացմունքը ծառայելով և օգուտ տալով այն պետութեան, որին անկեղծ նուիրուած էր, և իւր ազգին, որին ի բոլոր սրտէ անձնանուէր էր: Յանուն նորա զբուած հրովարտակներն և ուրիշ թղթերը ցոյց են տալիս, թէ կառավարութիւնը որքան էր գնահատում նրա մատուցած ծառայութիւնները. Եկատերինէ Կայսրուհին և Պօղոս Կայսրը յաճախ ընդունում էին նրան մասնաւոր ունկնդրութեան համար և արքայական պարգևներով լիացնում նրան: Եկատերինէ Կայսրուհին ընծայեց նրան մի չքեղ փիլոն, վեղարի մի ականակուռ խաչ և թանգագին մատանիներ. իսկ Պօղոս Կայսրը Ս. Աննայի առաջին կարգի պատուանշանը շնորհեց նրան և բարձրացրեց գերդաստանով հանդերձ յաստիճան իշխանութեան ռուսաց

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան